## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

*Էլեկտրականությունը լայն կիրառություն է գտել նաև կենդանի օրգանիզմներում: Օրգանիզմների նյարդային բջիջները օգտագործում են էլեկտրականությունը մկաններին և մկանային բջիջներին ազդանշաններ հաղորդելու համար: Մարդու սրտի մկանային բջիջները օգտագործում են էլեկտրականությունը կծկումներ կատարելու համար: Մեր ուղեղի՝ մարմնի մնացած մասերին հաղորդվող տեղեկությունները իրականացվում են նեյրոնների՝ էլեկտրականորեն գրգռվող բջիջների միջոցով: Էլեկտրական օձաձկները էլեկտրական լիցքն օգտագործում են գիշատիչներին վախեցնելու կամ զոհին ապշեցնելու համար: Էլեկտրական իմպուլսներ օգտագործում են նաև բադակտուցները՝ ջրում որս անելիս:*